

107/158

18

ՈՒՅՈՒ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՅՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ N 9

Ա. ԳԵՆՍ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ
ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

20 JUN 1917

ԲԱՆՎՈՐՈՒՄԻ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

362.15

Ա. ԳԵՆՍ

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ
ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ԳՅՈՒՂՈՒՄ



Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԵՆԿՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

**ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՂԱՀՂԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸ ԳՅՈՒՂՈՒՄ**

Մայրության և մանկության պահպանությունը գյուղում հետևյալ նպատակներն է հետապնդում.

1. Հղի կանանց առողջության պահպանությունը.
2. Ծննդաբերական կանոնավոր ոգնությունը.
3. Պաշար մանուկների մահացության դեմ.
4. Գեղջկուհի-մորը ցույց տալիք ոգնությունը դաշտային աշխատանքների ժամանակ:

Մայրության և մանկության պահպանության այս բոլոր նպատակներն իրագործվում են հետևյալ միջոցներով.
1) քաշել աշխատավորներին մոր և նրա չերեխայի առողջության պահպանման գործին. 2) մղել ազգաբնակչության մեջ կուլտուր-լուսավորչական պրոպագանդա. 3) մասնակից անել շրջանային բժիշկներին մայրության և մանկության պահպանության գործին. 4) կազմակերպել մայրության և մանկության պահպանության հիմնարկներ՝ կոնսուլտացիաներ հղի կանանց համար, յերեխաների համար, ծննդաբերական մահճակալներ (հրավիրել մանկաբարձուհիներ) և կազմակերպել ամառային մսուրներ:

1. Հղի կանանց առողջության պահպանությունը. Թեպետ հղությունը հիվանդություն չէ, բայց և այնպես, առաջ է բերում կնոջ կազմվածքի մեջ մի շարք մեծ փոփոխություններ, փորոնք պահանջում են բժշկական հսկողություն: Հղի կանայք մեծ մասամբ չգիտեն ինչպես խնամք տանել իրենց մասին հղություն պահուն, ուստի և հաճախակի տկարանում են, յերբեմն և վիժումներ են տեղի ունենում, հաճախ քայքայվում է ապագա յերեխայի առողջությունը:



11-23983 9/11

Գեղջկուհիները փոմանք խուլս են տալիս հղիութեանը, սախալած նշութական կարիքից, շատ յերեխաներ ունենալուց, իսկ յերբեմն և կեղծ ամոթից: Այդ գեղջկուհիք հղիանալուց հետո ջանք են գործ դնում ընդհատել հղիութեանը (վիժեցում անել տալ): Այդ նպատակով գեղջկուհիները դիմում են սոգետ տատմայրերին, փորոնք փոշ հրմուտ կերպով են կատարում վիժեցումը. այդ տեսակ վիժեցումից հետո գեղջկուհին յերկար ժամանակով տկար մնում է. պատահում են և մահվան դեպքեր:

2. Ծննդաբերություն. Գեղջկուհին դեռևս շատ հաճախ ծնում է փոշ թե հիվանդանցում ծննդաբերական մահճակալի վրա, կամ ծնում է տանը փոշ թե մանկաբարձուհու ոգնութեամբ, այլ և հաճախ հրավիրում է իր մոտ սոգետ տատմորը: Այս բացատրվում է նրանով, փոր շրջանային հիվանդանոցների ծննդաբերական մահճակալների թիվը անբավարար է, իսկ գյուղի մանկաբարձուհիների թիվը փոքր: Մինչդեռ տատմերն իր սոգիտութեամբ միշտ ել ֆլաս և հասցնում ծննդականին, ծննդկանը հիվանդանում է զանազան տկարութեաններով (ծննդաբերական ջերմ և այլն): Շատ ու շատ գեղջկուհիներ են մեռնում տատմոր անկանոն հասցրած ոգնութեանից:

Բացի այդ ծննդաբերության ժամանակ պետք է դեղ կաթեցնել նորածնի աչքի մեջ, փոր աչքերը չհիվանդանան և յերեխան չկուրանա: Այս նրա համար է, փոր շատ կանայք ունեն վենեռական հիվանդութիւն և ծննդի պահուն վարակում են նորածնի աչքերը: Շատ նորածիններ են կուրանում ամեն տարի:

3. Մանուկների մահացությունը. Գյուղացության մեջ մանուկների մահացությունը մեծ է, և ամենից շատ մեռնում են յերեխաները մինչև 1 տարեկան հասակն ամառվա շոգ ամիսներին՝ հուլիսին և ոգոստոսին: Մինչև մեկ տարեկան հասակն ամենից շատ մեռնում են մեկ ամսական յերեխաները:

4. Խնչպես ոգնել գեղջկուհուն դաշտային աշխատանքների ժամանակ. — Ամառն աշխատանքի տաք ժամանակը, յերբ հնձի յուրաքանչյուր որը, յուրաքանչյուր ժամը թանգ է, յերբ խնչպես ասում են, մեկ շաբաթը յերկարում է մի տարի, մանր յերեխաները մնում են տանը պառավ կանանց՝ ծերունիների և դեռահասների խնամքին, իսկ շատերը մնում են նույնիսկ բոլորովին առանց հսկողութեան:

Մայրական խնամքից դուրկ, մոր կաթից և մեկի հրակողութեանից դուրկ յերեխաները մեծ քանակութեամբ տրկարանում են, դրանցից շատերը մեռնում են, փոմանք հաշմանդամ են դառնում, իսկ յերբեմն կրակի հետ անըդգույշ խաղալուց հրդեհում են տունը:

Մայրութեան և մանկութեան պահպանութեան նպատակն է՝ պաշար մղել գյուղում հղի կնոջ դրութեան բարելավման համար ծննդկանի և փոքր յերեխաների դրութեան բարելավման համար:

Խնչպես դիմել այդ աշխատանքին, խնչ պետք է առնել կնոջ առողջութեան պահպանման համար:

Ամենից առաջ մոր և մանկան պահպանութեան աշխատանքների համար պետք է գրավել հենց գյուղացիներին-գեղջկուհիներին:

ԱՂԳԱՐԵՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԸ ՄՈՐ ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Առողջության պահպանութիւնը միայն այն ժամանակ կարող է տալ լավ հետևանքներ, յերբ խնքը՝ բնակչութեանը գործոն մասնակցութիւն է ունենում այդ գործում: Աշխատավորների առողջութեան պահպանութիւնը՝ աշխատավորների իրենց գործն է. — ահա խորհրդային բժշկականութեան հիմքը:

Ապա ուրեմն մայրութեան և մանկութեան պահպանութեան գործը գյուղում իրագործելու համար պետք է կազ-

մակերպել մայրության և մանկության պահպանության համար մշտական հանձնաժողովներ առընթեր գյուղատնտեսականներին և շրջագործկոմիտեներին:

Այդ հանձնաժողովի գլխավորը պետք է լինի խորհրդի անդամը. նրա մեջ պետք է մտնեն փոխադարձ ոգնության կոմիտեի, տեղական կոոպերատիվի և կոմյունիստականների ներկայացուցիչները, նաև բժիշկը, մանկաբարձուհին, ժողովրդական դատավորը, բանդեղջրածնի կադմակերպիչը, նույնպես և գեղջկուհիների ակտիվ պատգամավորուհիները:

Մայրության և մանկության պահպանության այդ հանձնաժողովը հետևյալ խնդիրներն է հետապնդում. աշակցում է բաց անել հիվանդանոցներում ծննդաբերական բաժանմունքներ, աշակցում է այդ բաժանմունքների կանոնավոր աշխատանքին, աշակցում է ավելացնել մանկաբարձուհիների թիվը, նպաստում է բաց անելու ծծկեր չեբեխանների և հղի կանաց համար կոնսուլտացիաներ, կադմակերպում է ամառային մսուրներ, կատարում է ազգաբնակչության մեջ կուլտուր-լուսավորական աշխատանք՝ տարածելու ճշմարիտ հայացքներ հղության և ծննդաբերության առողջապահության մասին, չեբեխաններին ծծով կանոնավոր կերակրելու մասին, չեբեխանների տածման մասին (այս աշխատանքի համար պետք է լայն շափով ոգտագործել գյուղական ինտելլիգենցիային). նպաստում է նյութական և իրավաբանական ոգնություն հասցնելու մայրերի մեծնակեցներին, բարակուհիներին և հույժ չքավոր գեղջկուհիներին, տեղական մարմինների ոգնությունը հոգ և տանում այն ծծկեր չեբեխանների խնամատարության մասին, վորոնք զրկվել են մորից. ջանք է գործ դնում ստեղծելու տեղական ազգաբնակչության մանկաբարձուհիների կադր, թոշակառուներ ուղարկելով մանկաբարձական դպրոցը:

Հիշյալ ձեռնարկումների իրագործման համար—հանձնաժողովն իր առաջարկներն անում է խորհրդին, աշխատում է մտցնել տեղական նախահաշվի մեջ մայրության և

մանկության պահպանության հիմնարկների կադմակերպության ծախքերը, ազգաբնակչությանից դրամ և ժողովում, գործում է տեղական հասարակական կադմակերպություններին (կոոպերատիվներին, փոխադարձ ոգնության կոմիտեներին) ակտիվ ոգնություն ցույց տալ մայրության և մանկության պահպանության գործին. հանձնաժողովն անց է կացնում մայրության և մանկության կամպանիաներ:

Այգպիսով, մայրության և մանկության պահպանության գործում առաջին հերթական խնդիրը հանդիսանում է վերոհիշյալ հանձնաժողովների կադմակերպումը: Այդ հանձնաժողովների աշխատանքների սկսելուց հետո մենք կարող ենք հավատացած լինել, վսր գործը հաջող ընթացք կունենա:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԿԱՏԱՐԵԼ ԳՅՈՒՂՈՒՄ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մայրության պահպանության գործի ամենագլխավոր խոչընդոտները հանդիսանում են ազգաբնակչության անկուլտուրականությունը, սեռահավաստությունները և տգետ սովորությունները. ուրեմն շատ հասկանալի է, վոր կուլտուր-լուսավորական աշխատանքները կադմում են այդ գործի հիմքը:

Այդ աշխատանքը գլուղում պետք է կատարենք հետևյալ ձևով. նախ և առաջ անհրաժեշտ է, վոր լինեն դասախոսություններ, վոր շրջանային բժիշկը կարգա գեկուցումներ գեղջկուհիների կոնֆերենցիաներում և ժողովներում: Դասախոսությունների հետ միաժամանակ պետք է լինեն և լույսի նկարներ:

Բացի այդ բոլոր խրճիթ ընթերցարաններում պետք է ցուցադրվեն մայրության և մանկության պահպանության վերաբերյալ հատուկ պլակատներ, թերթեր, լոզունգներ, ժողովրդական գրքուկներ և այլն:

Շրջանային բուժարանում, մայրության և մանկության պահպանության հիմնարկներում անհրաժեշտ է հաղորդել գեղջկուհի մայրերին ծծկեր չերեխայի տածման և սնման մասին. պետք է ժողովի հրավիրել մայրերին և գեկուցումներ կարդալ մայրության պահպանության մասին: Տարածել Առժողովմատի և Կին բաժնի հանրամատչելի գրականությունը մայրության և մանկության պահպանության մասին:

Շրջանային բժիշկներին մասնակցությունը մայրության և մանկության պահպանության գործում:

Նշանակել շրջանում կոնսուլտացիայի որ. Շրջանային բժիշկներն ելապես միշտ ել մասնակցում են մայրության և մանկության պահպանությանը, ընդունելով հղի կանանց, ոգնելով ծննդաբերին և չերեխաներին ծննդաբերության ժամանակ: Բայց այդ ոգնություն մի բացն այն է, վոր հիշած անձինք շրջանային բժշկին գիմում են միայն հիվանդության դեպքում, մինչդեռ մենք կարծում ենք, վոր պետք է կանխել հիվանդությունները, իսկ դրան կարող ենք մենք հասնել այն ժամանակ, չերեխոսները տանք հղի կանանցը, ծննդաբեր կանանց և մայրերին, թե ինչպես է հարկավոր խնամք տանել իր մասին, և թե ինչպես պետք է տածել չերեխային:

Ահա թե ինչու մայրության և մանկության պահպանության բաժնին ոգտակար է գտնում, վոր շրջանային բժիշկները նշանակվին մեկ որ կոնսուլտացիայի ընդունություն համար: Այդ նշանակում է, վոր այդ որը շրջանային բժիշկը պետք է ընդունի հղի կանանցից և ծննդկաններից միայն առողջներին, պետք է ընդունի մայրերին ու առողջ չերեխաներին. վոր այդ որը բժիշկը բացատրելու չե թե ինչպես պետք է հետևել իր և չերեխայի առողջությունը և գրանով բժիշկը կկանխի նրանց հիվանդությունը:

Մեր գալատներից շատերը արձագանք տվեցին մայրու-

թյան և մանկության բաժնի կոչին և կոնսուլտացիայի որեր կազմեցին իրենց մոտ:

Ծննդաբերական ոգնությունը. Ծննդաբերության ոգնություն գործի կանոնավոր գրվածքի համար պետք է ապահովել բոլոր գեղջկուհիներին, ստանալ ոգնություն մանկաբարձուհուց. պետք է ջանք գործ դնել, վոր վոչ մի գեղջկուհի չերեք չգիմի պառավ տատմորը. իսկ գրանով մենք փրկած կլինենք ծննդկաններին մահից և կպահպանենք գեղջկուհիներին հետծննդյան զանազան հիվանդություններից:

Մանկաբարձուհին վոչ միայն կանոնավոր ոգնություն ցույց կտա գեղջկուհուն ծննդաբերության ժամանակ, այլ և կպատմի թե ինչպես պետք է տածել չերեխային, ինչպես կերակրել և դաստիարակել. և վորովհետև չերեխաների մեծ մասը մեռնում է հենց առաջին որերին ծնվելուց հետո, մենք մանկաբարձուհու ոգնությամբ կարող ենք պաշար մղել չերեխաների մահացություն դեմ, կարող ենք պակասեցնել այդ:

Իհարկե, ծննդաբերի համար ամենալավ ոգնությունը — հիվանդանոցում ծննդն է, մաքուր սարք ու կարգի մեջ, բժշկի հսկողության ներքո, մանկաբարձուհու ոգնությամբ: Մենք պետք է աշխատենք, վոր չուրաքանչյուր շրջանային հիվանդանոցում լինեն 2—3 մահճակալ ծննդաբերության համար:

Ներկայումս մենք այնքան բավարար նյութական միջոցներ չունենք, վոր բոլոր գյուղական հիվանդանոցներում սարքենք ծննդաբերական մահճակալներ. ուստի այժմ գրվ խավորապես պետք է ավելացնենք մանկաբարձուհիների թիվը, վորպիսի հանգամանքն ավելի է ժան է, ապա և ավելի մատչելի:

Կոնսուլտացիա չերեխաների համար. Մայրության և մանկության պահպանության ամենաոգտակար հիմնարկը — չերեխաների հսկողական մահացություն դեմ գլուղում պաշարելու համար — չերեխաների կոնսուլտացիան է այդ կոն-

սուրապիաներն իսկական դպրոցներ են մայրերի համար լե-
րեխաների տաժման վերաբերյալ ծծկեր լերեխաներին կա-
նոնավոր կերակրելու և դաստիարակելու համար: Միմյանց
մոտ գտնվող մի քանի գյուղերի համար կարելի է հիմնել
մեկ կոնսուլտացիա և այդպիսի կոնսուլտացիայի բժիշկն
ու քույրն ընդունում են չուրաքանչյուր գյուղի լերեխա-
ներին հերթով: Այդ տեսակ կոնսուլտացիայի համար անձ-
նական մեծ կազմի պահանջ չկա — մեկ բժիշկ և մի քույր.
սարքավորումը նույնպես բարդ չէ. ամենազլխավորը ունե-
նալ կոնսուլտացիայում մի կշեռք լերեխաներին կշռելու
համար:

Ներկայումս մանկական կոնսուլտացիաների կազմակեր-
պությունը առաջնակարգ խնդիր է դառել:

Ամառային մսուր. Շատ դժվար է աշխատել գյուղում
մայրության պահպանության գործում. գյուղական զանգ-
վածները գեռ չգիտեն՝ ինչ բան է մայրության պահպա-
նությունը և ինչի համար է նա. ահա թե ինչու ամառ-
յին մսուրի կազմակերպությունը այն մսուրի, փորն ամառ
ժամանակ ազատում է գեղջկուհի մորը լերեխայի հոգսերից,
անենալով մեթոդն է գյուղում պրոպագանդա մղելու մա-
յրության և մանկության պահպանության գործում: Ամա-
ռային մսուրը — առաջին գործնական քայլն էն:

Ինչպե՞ս կազմակերպել մսուրը և ինչպես աշխատել
այն տեղ: Ամառային մսուրը հարկավոր է հետևյալ նկա-
տառումներով.

1. Ամառը, չերթ թանգ է չուրաքանչյուր որը, չուրա-
քանչյուր ժամը — ամառային մսուրը բարձրացնում է գեղջ-
կուհու աշխատանքի արտադրողականությունը, ազատելով
մորը-գեղջկուհուն լերեխաների տաժման հոգսերից

2. Աշխատանքի պահուն, չերթ բացակայում է լերե-
խաների կանոնավոր սնումը, չերթ չկա խնամք և հսկողու-
թյուն լերեխաների վրա, խիստ բարձր է հիվանդացող և
մեռնող լերեխաների թիվը, մի շարք պատահարներ են տե-

ղի ունենում լերեխաների հետ — այդ պահուն ամառային
մսուրը պահպանում է մանկան առողջությունը, հաճախ
և կյանքը:

3. Գեղջկուհի-մայրերը, հաճախելով մսուրը, սովորում
են կանոնավոր կերակրել, տաժել և դաստիարակել լերե-
խաներին — այդպիսով, ամառային մսուրը հանդիսանում է
գլխից գեղջկուհի-մայրերի համար:

Բոլոր նախապատրաստական աշխատանքները միջոց-
ներ հայթաթելու վերաբերյալ, շենք, գույք պատրաստելու
համար և այլն... կատարում է գյուլսորհրդին, շրջգործկուհին
կից գործող մայրության և մանկության պահպանության
հանձնաժողովը, իսկ աշխտեղ, փորտեղ չկա այդպիսի հանձ-
նաժողովներ, կազմում են մսուրի կոմիտե միենուն կազ-
մով. ինչպես և մայրության և մանկության պահպանու-
թյան հանձնաժողովը:

Մսուրի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները
ճարում են հենց իր տեղում հասարակական փոխադարձ
ոգնություն կոմիտեյում. կոոպերատիվում, շրջգործկոմի-
մեջ, գյուլսորհրդի, գյուղատնտեսական և վարկային ըն-
կերությունների մեջ. կազմակերպում են մսուրի ոգտին
ներկայացումներ, դասախոսություններ, հարկ չեղած դեպ-
քում կազմում են և հանգանակություն մսուրի ոգտին:
Բացի այդ միջոցներ, գույք, սպիտակեղեն ստանալու հա-
մար պետք է դիմել առբաժնի աշխատակիցներին կամ գյու-
ղական հասարակության շեֆական հանձնաժողովին (չեթե կա
այդպիսին):

Յեթե բավականաչափ միջոցներ չկան — կարասիքը,
անտեսական առարկաները, ամանեղենը ժողովում են ժա-
մանակավորապես ողավելու համար գեղջկուհիներից, հիմ-
նարկություններից, շրջանային հիվանդանոցից և այլն:

Ձանազան կազմակերպությունների ոգնությունը ստա-
նալուց հետո, պետք է պատրաստել և հասարակության
բարչացակամ վերաբերմունքը, զրա համար մսուրի կո-

միտեն կամ մայրության և մանկության պահպանության հանձնաժողովը հրավիրում է զեղջկուհիներին ժողովի, փորտեղ բացատրում է ինչ բան է մսուրը, ում համար է նա հարկավոր, փորքան հնարավոր է բացել մսուրը, մսուրի կոմիտեի չուրաքանչյուր անդամն ինչով կարող է ոգնել մսուրին:

1. Գյուղկազմակերպիչը և զեղջկուհիների պատգամավորուհիները պետք է լինեն մսուրների ամբողջ կազմակերպման և նրանց կենսունակության ամենագործոն մասնակիցները. նրանք պետք է վերցնեն իրենց վրա կազմակերպչական աշխատանքը, նրանք պետք է ստեղծեն մսուրը: Ամառը մսուր կլինի աչն գյուղում, փորտեղ գյուղկին կազմակերպիչը և պատգամավորուհիք գործունյա չեն:

2. Կազմակերպչական աշխատանքի մեջ մասնակցում է և շրջգյուղգործկոմի ներկայացուցիչը, ըստ հնարավորության հոգս է տանում միջոցների մատին, մատակարարում է բանվոր ուժ (ցախ, ջուր, մթերքներ և այլն):

3. Կոտպերացիան ցույց է տալիս նյութական ոգնություն, բաց է թողնում մթերքներ եփան գներով, վճարները պահանջում է մաս-մաս, մսուրի համար անհրաժեշտ իրերի մի մասը բաց է թողնում և ձրխարար:

4. Փոխադարձ ոգնություն կոմիտեն ոգնություն է հասնում մսուրին իր ֆոնդից վառելանյութով, կենդանիներով (որինակ կով):

5. Կոմիտեի անդամները մասնակցում է գյուղի հանգանակությունը (ամանեղեն սեղաններ ավտուակներ, պահարաններ անասնապահան պիտուկներ), ցույց է տալիս բանվորական ոգնություն (բերել ջուր, ցախ, մթերքներ, շենքը մաքրել):

6. Շրջանային բժիշկը մասնակցում է մսուրի կազմակերպման գործին, հսկում է մսուրի կյանքի սանիտարական պայմանների վրա, քննում է մսուրն ընդունվող չե-

րեխաներին, հրահանգներ է տալիս մսուրի անձնական կազմին չերեխաների տաժման, սննդի և բուժման մասին:

7. Ուսուցչուհին մասնակցում է մսուրի կազմակերպման գործին կուլտուր-լուսավորական աշխատանքներով, ոգնություն է գալիս մսուրին իր մանկավարժական փորձառությունը:

Մսուրի շենքի համար կարելի չէ գործադրել դպրոցը, մի փոքր տուն, կամ չերկու չերեք ընդարձակ խրճիթ: Շենքը պետք է լինի մաքուր և լուսավոր (մսուրը բացելուց առաջ պետք է սպիտակացնել շենքը): Շենքի չափից կախում ունի և չերեխաների տեղավորելը մսուրում: Աչտեղ, փորտեղ կա հարմարություն, պետք է ծծկեր չերեխաներին հատկացնել մի առանձին սենյակ. առանձին տեղավորել մեկից մինչև չերեք տարեկան չերեխաներին. ցանկալի չէ ունենալ մի առանձին սենյակ վարակիչ հիվանդություններից կասկածելի չերեխաների համար:

Մսուրի սարքավորման ժամանակ պետք է հարմարվել գյուղական կենցաղի սովորական շրջապատին և ջանք գործ գնել անհրաժեշտ իրերը մսուրի համար ձեռք բերել հենց ազգաբնակչությունից: Բացի անհրաժեշտ սարքից մսուրում մանկան սպրուստի համար անպատճառ պետք է լինեն մաքուր տոսրակներ չերեխաների հագուստի համար. պետք է լինեն լվացարան, անձնական կազմի համար խալթներ, ջրի ջերմաչափ, ծծակներ. բամբակի համար ապակուց անոթ, գավաթիկներ, արկղիկներ, սեղանների համար մոմաշոր (կլեյոնկա), կաթի շշեր խցաններով, ձաղար, խոհանոցի և ձեռքերի սրբիչներ, անձնական կազմի համար դոզնոգներ, ամաններ կղկղանքի համար:

Ցանկալի չէ, փոր մսուրն ունենա սպիտակեղենի իր պաշարը, փորով հնարավոր կլինի իսկապես մաքուր պահել չերեխաներին: 10-ը ծծկեր չերեխաների համար անհրաժեշտ է ունենալ՝ 10 ներքանկներ, 10 մոմլաթ (կլեյոնկա, չուրաբանչուրը մեկ քառակ. արշնի), 30 սավան, 30 շապիկ,

20 բարձի լերես, 10 ամառաչին վերմակ և 100 փաթաթան: Մեծ լերեխանների համար—ներքնակներ, շապիկ-վարտիկներ, սրբիչներ, սավաններ և բարձի լերեսներ:

Յեթե մեծ լերեխանների համար սպիտակեղենի բավարար պաշար չկա, պետք է ստանալ լերկրորդ ձեռք սպիտակեղենը մայրերից, վորը հագնում են լերեխանները մսուր գալիս:

Մսուրում պետք է լինի փոքրիկ դեղատուն. Չերմաչափ, չորի տինկուր—30,0 խոնավածուծ բամբակ 200,0 հասարակ բամբակ 400,0 ստերշած թանգիվ 5 մետր. թանգիվից վիրակապ լերիզներ (բինտեր) 20 հատ, մոմած թուղթ 5 թերթ—սովորական թանգիվ—10 մետր. կաշան սպելա-նի $1\frac{1}{2}$ մետր, տալի—200,0, բորալին թթու 200,0 լուծողա-կան ձեթ—200,0 մաքուր սոդա 100,0, վաղելին 50,0 կա-նաչ սապոն 300,0, հոգնալի համար մեկ գունդ, աչքի դեղի կաթոցիկ—2 հատ. դեղերը գործածելուց հետո պետք է հետզհետե լրացվեն:

Ինչ վերաբերում է մսուրի անձնական կազմին, ցանկալի է լինի մսուրի գեկավարությունը հանձնել բժշկական կրթություն ունեցող անձնավորության (բժշկին, բուժա-կուհուն, գթության քրոջ) կամ այն պատգամավորուհուն, վորն ստացել է մասնագիտական պատրաստություն, թե-կուղ և կարճատև:

Մսուրի վրա լավ հսկելու համար, ցանկալի է, վոր մսուրի կառավարչուհու բնակարանը լինի հենց մսուրում, կամ անմիջականորեն նրա մոտ:

Մսուրի կառավարչուհին պատասխանատու է հիմնա-րկության կարգի համար, նրան է հանձնվում գույքը, նա է տանում հաշվետվությունը: Մնացած պաշտոնյաները լին-թարկվում են կառավարչուհու ցուցմունքներին: Յերեխա-նների տաժման համար պետք է լինեն քույրեր: Չափազանց կաբուր է, վոր գոնե մեկ քույր լինի, վոր լավ ծանոթ է լերեխալին խնամելու հետ, ծծով կանոնավոր կերակրելու

հետ: Յեթե չկան քույրեր, աշխատանք տանում են դայակ-ները հետևյալ հաշվով՝ ծծկեր լերեխաններին լերկու քույր (գալակ) 10 հոգու համար և մեծերին—լերկու քույր (գա-լակ) 20 հոգու համար: Դայակներ վերցնելիս պետք ենա-խապատվություն տալ տեղական կանանց, վորոնք լավ հայտնի չեն գեղջկուհիներին:

Մնացած պաշտոնյաներն են խոհարարուհի և լվացա-րարուհի: Քույրերի պարտականությունն է—հնամեկ և հը-կել լերեխանների վրա. քույրերը կատարում են այն բոլորը, ինչ հարկավոր է լերեխանների տաժման համար—կերակրում են, լվանում են հազցնում են... Քույրերը հսկում են, վոր լերեխանների առողջության դրությունը, մեկուսացնելով վարակիչ հիվանդությունից կաակածելուն և ուղղելով բժշկի մոտ այն լերեխաններին, վորոնք քննություն կարոտ են: Քույրերը կատարում են բժշկի նշանակումները լերեխանե-րի տաժման և բուժման վերաբերյալ:

Քույրերն ուղեկցում են լերեխաններին դոստանքի ժա-մանակ և հսկում են նրանց վրա խաղալու ժամանակ:

Դայակները մաքում են շենքը, ոգնում են քույրերին լերե անհրաժեշտ է տաժել և հսկել լերեխանների վրա, իսկ լերը լվացարարուհի չկա, լվացք նրանք են անում:

Առաջին հերթին ընդունվում են մսուր չքաղորներին, բաարակուհիներին և կարմիր բանակալիներին լերեխանները, իսկ լերկրորդ հերթին գլուղացի-միջակներին և ծառացո-ղների լերեխանները: Մսուր պետք է ընդունել այն ծծկեր լերեխաններին, վորոնք բացառապես ծծով են սնվում, այսինքն մինչև 6 ամսական հասակը: Պետք է համոզել, վոր մայրերը տանեն ծծկեր լերեխաններին դաշտը, վոր կերակրեն նրանց աչտուղ, բաց պետք է պահեն նրանց սովերում և պաշա-պանեն մոծակներից. առաջին հերթին ընդունվում են մը-սուրը վեց ամսականից մեծ լերեխանները և մինչև 7 ամ-սական հասակ ունեցող լերեխանները, վորոնք խառը կեր-

պով են սնվում կամ արհեստական սնունդ են ստանում, բայց մեկ մսուրում 20-ից փոշ ավել:

Յանկալի չե գերազանցապես ընդունել մինչ 3 տարեկան չերեխաներին, վորոնք ամենից շատ են կարոտ կանոնավոր տաժման և հսկողության: Կարելի չե, ի հարկե, ընդունել և ավելի մեծ չերեխաներին, մինչև 6 տարեկանները ներառյալ:

Ընդունելության ժամանակ բժիշկը նախորոք քննում է չերեխաներին: Մսուրի վարիչը և քույրերն ամեն ուր են ընդունում չերեխաներին. մանրակրկիտ կերպով քննում են չերեխաներին, չունեն արդյոք մի վորեւ վարակիչ հիվանդության նշան, մարմինը գուրս չի տված, կասկածելի հազ կամ լուծ չունեն արդյոք: Ծծկեր չերեխաներին տկուրացնում են և լողացնում ծծկերների ննջարանում: Մեծ չերեխաներին ըստ հնարավորության տկուրացնում են և լողացնում ընդունարանում, չեթե կա այդպիսին. բոլոր չերեխաներին մաքուր հագուստ են հագցնում, չերեխաների շորերը դնում են տոպրակի մեջ, յուրաքանչյուր չերեխային առանձին: Ծծկեր չերեխաների համար մանկասնյակ սահմանելիս պետք է ընտրել ամենամեծ և լուսավոր սենյակը: Նրա սարքավորումն առանձնապես բարդ է, ուստի և պահանջում է շատ մեծ ուշադրութուն: Յուրաքանչյուր ծրծկեր չերեխա պետք է ունենա իր կողովը կամ մահճակալիկը դրած նեցուկի վրա: Կողովը հատակին դնել չի կարելի. մահճակալիկն այնպես են դնում, վոր չերեխայի մեջքը դարձված լինի դեպի լույսը, վորովհետև ուժեղ լույսը վնասակար է չերեխայի տեսողության համար:

Մահճակալիկների միմյանց միջի տարածությունը ցանկալի է վոր $1-1\frac{1}{2}$ արշնից պակաս չլինի. յուրաքանչյուր չերեխա պետք չե ունենա իր փոքրիկ գավաթը ծծակի համար և արկղիկը ցանելու փոշու համար: Միայն այս դեպքում կարելի չե իրադործել չերեխայի կանոնավոր տաժումը: Գիտութունը և փորձերը ցույց են տալիս, վոր ծծկեր

չերեխաները չեթե նրանց պահում են մի սենյակում, առողջ են լինում այն ժամանակ, չերը մանրակրկիտ կերպով տաժում են նրանց. յուրաքանչյուր չերեխա ունի տաժման իր առարկան առանձին, իսկ այս հանգամանքը պաշտպանում է չերեխային վարակ փոխանցելուց ուրիշ չերեխայից:

Մանկական ամբողջ գույքը պետք է պահել մի առանձին մաքրությամբ ինչպես և սենյակը: Պատուհանները պետք է ունենան ցանց ճանձների դեմ: Յերեխայի լողացնելու վանան կամ տաշտը պետք է լինի ցինկած չերկաթից և վոշ տախտակից, միշտ պետք է ծածկած լինի սովանով և ամեն անգամ գործածելուց հետո պետք է հսկել, վոր չերեխայի հետ շփում ունեցողներից փոշ վոր անվաճեքերով չմոտենա չերեխային: Յերեխայի դեմքն ու մարմինը պետք է լվանալ լվացարանի մոտ գոլ ջրով: Ծծկեր չերեխաներին պետք լողացնել ամեն ուր, հարկ չեղած դեպքում լվացարանի մոտ սապոնով: Ջրի տաքութունը 28° , լողացնելը շատ կարճ պետք է տևի: Յերեխաներն ամբողջ ուր հանգիստ պառկած են մնում մահճակալներում և տաժողները հսկում են. վոր նրանք չոր լինեն և ժամանակին սնունդ ստանան. ծծկեր չերեխայի բերանը չի հարկավոր սրբել առանց բժշկի պահանջի, չեթե կան կշեռք, պետք է կշռել նրանց շաբաթական մի անգամ և վորոշված ուր:

Քույրը կամ վարիչը գրում է չերեխաների քաշը, սնունդն ու կղկղումը և առողջության դրությունը, հայտնելով իրենց դիտողությունները բժշկին:

Յերեխայի սպիտակեղենն ու անկողինը պետք է պահել որինակելի մաքրության մեջ:

Լավ չեղանակներին պետք է պահել չերեխաներին կողովի մեջ բաց ողում: Շոգ ժամանակ չերեխաներին պետք է պահել ստվերում:

Ամառն անհրաժեշտ է տալ (կերակրելու ընդմիջում-



ներին) մեկ կերակրելուց մինչև մյուս կերակրելը խմելու համար մի քանի թեյի գդալ չեռացրած սառ ջուր:

Ծծով սնվող յերեխաների հավելյալ սնունդ պատրաստելը մեծ ուշադրություն է պահանջում, ինչպես մաքրություն և ճշտապահություն:

Յուրաքանչյուր յերեխայի հավելյալ սնունդը պիտի նշանակի բժիշկը:

Հավելյալ սնունդը պիտի պատրաստել ամենապարզ ձևով և միշտ ել բժշկի տված ցուցմունքներով:

Վորպեսզի մսուրն ունենա թարմ և մաքուր կաթ, պետք է նա ունենա իր սեփական կովը:

Առողջ, մինչև 5 շաբաթական յերեխաների համար հետևյալ խառնուրդն են պատրաստում. կաթ—1 բաժին, մեկ բաժին ջուր շաբաթախառ հետևյալ հաշվով, յերկու շաբաթական յերեխայի համար պետք է վերցնել 6 հացի գդալ չեռացրած ջուր, ավելացնել 6 հացի գդալ կաթ, ավելացնել 2 թեյի գդալ շաքար. այս բոլորը չեռացնել 2—3 բուլի և լցնել 3 առանձին շի մեջ, կտանանք յերեխայի համար յերեք անգամվա սնունդ. Յերեք շաբաթական յերեխայի համար պետք է վերցնել միևնույն տեսակի խառնուրդ, բայց քանակով շատ: Իսկ 4—6 շաբաթական յերեխայի համար պետք է խառնուրդից վերցնել կես բաժակ:

6—12 շաբաթական (4 ամսական) յերեխաների համար պատրաստում են հետևյալ խառնուրդները. յերկու բաժակ կաթ, ավելացնել մեկ բաժակ չեռացրած ջուր, ավելացնել 6 թեյի գդալ շաքար, չեռացնել ու լցնել 3 սրվակ:

Բաժակի մեջ 12 հացի գդալից պակաս չպիտի լինի:

6—8 ամսական յերեխաները հետևյալ խառնուրդն են ստանում իբրև հավելյալ սնունդ. յերեխային մի անգամ կերակրելու համար պետք է վերցնել կես բաժակ կաթ, ավելացնել մեկ քառորդ բաժակ չեռացրած ջուր, ավելացնել կես թեյի գդալ շաքար:

Ծծով կերակրվող վեց շաբաթական յերեխային ել կա-

լի լի չե հավելյալ սնունդ տալ, թեև ամառն ավելի լավ է, վոր նա միայն ծծով կերակրվի:

Ջրի փոխարեն կաթը լուծելու համար կարելի չե գործ ածել զանազան տեսակ ձավարի խաշուկներ (բժշկի նշանակումով): Շատ հաճախ յերեխաներն ունեն լուծ, ստիպված 1—2 որ նրանց պետք է տալ ձավարի խաշուկ կաթի խառնուրդի փոխարեն: Այդ խաշուկը (գարուց, վարսակից, բրնձից) պատրաստում են հետևյալ ձևով՝ այդ հատիկներից 2 թեյի գդալ չեռացնում են 2 բաժակ ջրի մեջ ախրան, մինչև կանգնում է կեսը (մոտ $\frac{3}{4}$ ժամ), քամում են մաղով կամ մաքուր կտորով և ավելացնում են չեռացրած գոլ ջուր (ախրան, վորքան սկզբումն էր): Խաշուկի համար շաքար յերկու անգամ ավելի շատ են վերցնում, քան ջրի խառնուրդի համար:

Աղյուսակ սեզոնի խառնուրդի բաճակի համար

Յերեխայի հասակը շաբաթներով	Թեյ	Ջուր	Ձավար	Վորպեսզի բաժակ	Հավելյալ սնունդ
Մինչև 6 շաբաթական	6 հ. գդ.	6 հ. գդ.	2 թ. գ.	4 շի:	Մանկի կաթնով բանջարեղենի սուպ, պյուրե կիսել, սպիտակ պակսիմատ կաթի խառնուրդների հետ:
6—12 շաբաթական	2 հ. գդ.	1 հ. գդ.	6 թ. գ.	3 շի:	
4—8 ամսական	1 $\frac{1}{2}$ բաժ.	$\frac{3}{4}$ բաժակ	2 թ. գ.	3 շի:	
6—8 ամսական	միևնույն	խառնուրդը			
8 ամսից հետո	զուտ կաթ		միևնույն	հավելյալ սնունդը (յեթե ծիծ չի ուտում):	

6—7 ամսական յերեխային, բացի կաթից (յեթե ծիծ չի ուտում) պետք է տալ և հավելյալ սնունդ, կաթնով, մսաջուր, կիսել և մաղով անցկացրած բանջարեղեն (պյու-

րե)։ Կաթի աննդի փոխարեն (ծծի կամ արհեստական), կարելի չե տալ մի բաժին կաթնով կամ բանջարեղենից պուրե, մյուս տեսակի փոխարեն—մեկ բաժին բուլլոն պատրաստած մաննի կամ գարու հատիկներից. 9 ամսից մեծ չերեխային բուլլոնից հետո, կարելի չե տալ կիսել կամ խնձորից պուրե և պակսիմատ։

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԿԱԹՆՈՎԸ

Մաքուր լվացած կաթնալի մեջ լցրեք մեկ բաժակ ջուր, թեյի գդալի ծայրով ավելացրեք աղ և զրեք կրակի վրա. հենց վոր ջուրը կյեռա, ձգեք մեջը 2 թեյի գդալ մաննի հատիկներ և չեփեք թույլ կրակի վրա խառնելով, մինչև վոր կմնա ջրի կեսը. զրանից հետո քիչ քիչ ավելացրեք $\frac{1}{2}$ բաժակ հում կաթ, ավելացրեք մեկ թեյի գդալ շաքար և 2 անգամ լավ չեռացրեք. միայն միշտ խառնեցեք գդալով։ Այս բաժինը մեկ չերեխայի համար ե։

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԿԻՍԵԼԸ

Կիսելը պատրաստում են զանազան պտուղների և մրգերի խաշուկներից՝ բալից, մորուց, չերակից, խնձորից և սալորից։ Մեկ բաժին կիսելի համար բավական ե վերցնել մեկ կամ չերկու թեյի գդալ չորացրած պտուղ կամ միրգ։ Սկզբում շատ մանրակրկիտ կերպով լվանում են պտուղները, զնում են մեծ կաթնալի մեջ 2 բաժակ ջուր, չեփում են մինչև փափկելը և մինչև հեղուկի կեսը։ Յեթե չեղուկը քիչ ե, կարելի չե ավելացնել մոտ մեկ բաժակ չեռացրած ջուր. հետո գդալով արորում են պտուղները և այդ խաշուկն անց են կացնում մանրամաղով։ Խաշուկի մի մասը զնում են կրակի վրա, ավելացնում են նալած համին 2—3 թեյի գդալ շաքար, իսկ մյուս մասը, քիչը, սառեցնում են, խառնում են զրա մեջ 1 թեյի գդալ գեանախնձորի (կարտոֆիլի) կամ ցորենի ալյուր, լցնում

են տաք խաշուկի մեջ և խառնելով, չերկու անգամ չեռացնում են։ Կիսելը պետք ե պատրաստել ամեն որ թարմը։

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԵԼ ՊՅՈՒՐԵ

Պյուրե պատրաստելու համար պետք ե վերցնել թարմ բանջարեղեն (կարտոֆիլ, գազար, բոդկ, բազուկ, կաղամբ) մաքուր լվանալ. չեփել աղ ձգած ջրի մեջ մինչև փափկելը, ջուրը քամել, բանջարեղենը արորել գդալով, վորքընքուշ խլուս ստացվի։ Պյուրեյին կարելի չե ավելացնել, բժշկի նշանակումով իհարկե, մի թեյի գդալ սերի կարագ կամ մի թեյի գդալ շաքար մի բաժակ պյուրեյին։

ՄԵԾ՝ ՅԵՐԵԼՈՒՆԵՐԻ ՄՆՈՒՆՊԸ

ՈՐԻՃԱԿԵԼԻ ԱՃՈՂԱԳՈՒԼՅԱԿ

Մինչև 2 տարեկան չերեխաների համար.

Առավոտյան.—Մեկ բաժակ կաթ և $\frac{1}{8}$ ֆ. պակսիմատ.

Յերկրորդ նախաճաշ.—Կաթնով.

Ճաշ.—Մսի սուպ կամ բուլլոնի սուպ, պատրաստած բանջարեղենից չուրով և ալյուրով. չերկրորդ տեսակը—խնձորի պուրե, կոմպոտ կամ կիսել.

Ընթրիք.—1 բաժակ կաթ պակսիմատով կամ պուրե.

2—5 տարեկան չերեխաների համար.

Առավոտյան.—Մեկ բաժակ կաթ և հաց.

Յերկրորդ նախաճաշ.—Ցորենի կամ գրեչիլի հատիկներից կաշա.

Ճաշ.—Մսի սուպ կամ բանջարեղենի սուպ, չերկրորդ տեսակը—մսի կալեա. չերկրորդ տեսակը—կիսել, կոմպոտ կամ խնձոր.

Ընթրիք.—Մեկ բաժակ կաթ, հաց, ավորոզ կամ ձրվածեղ։

ՄՍՈՒՐԻ ԿԱՐԳԻ ՈՒ ԿԱՆՈՆԵ

Որվա կարգը պետք է լինի հետևյալ ձևը.

Քույրերն ընդունում են ծծկեր չերեխաներին, նրանց լողացնում են, հագցնում են մաքուր սպիտակեղեն և տալիս են մայրերին կերակրելու: Յանկալի չե, վոր մայրը ծիծ տալուց հետո, չեթե կաթը շատ է և նա չի կարող դալ 3 - 4 ժամից հետո մյուս անգամ կերակրելու համար՝ կթի իր կաթը և լցնի մի գավաթի կամ շշի մեջ: Յուրաքանչյուր չերեխայի համար ժողովում են ալդ կաթն առանձին շշի մեջ և դնում նկուղը. կերակրելուց առաջ ալդ կաթը տաքացնում են տաք ջրի մեջ. առաջին կերակրելու ժամանակ քույրը ցույց է տալիս մայրերին, թե ինչպես պետք է կերակրել չերեխային, ինչպես պահպանել մաքրութուն: Ծիծ չուտող չերեխաների գալուց առաջ պետք է պատրաստ լինի կաթի խառնուրդը նրանց համար: Առողջ ծրծկեր չերեխաներին պետք է կերակրել 3 ժամից փոշ հաճախ: Ծծկերների բաժանմունքում պետք է կերակրել բոլոր չերեխաներին միաժամանակ, վորպեսզի կարգ սովորեցնել չերեխաներին, անհրաժեշտ է զարթեցնել նրանց կերակրելու ժամանակ: Այդպիսով կարճ ժամանակից հետո հեշտանում է նրանց տածումն ու հակողութունը: Կավ չեղանակին չերեխաներն անց են կացնում ամբողջ օրը բաց ողում. ժամանակ առ ժամանակ պետք է զրկել չերեխաներին և ման ածել նրանց, փոշ մի կերպ թուլատրելի չե շարժելը: Մինչև չերեխաների տուն գնալը պետք է լվացած և չորացրած լինի նրանց սեփական հագուստը, չեթե կեղտոտ է. տուն գնալիս չերեխաներին հագցնում են նրանց հագուստը: Ննջարանների լուսամուտները բացել ամբողջ օրը: Ամբողջ օրվա ընթացքում քույրերը հսկում են, վոր ննջարանները մաքուր լինեն, վոր ժամանակին

ժողովեն թաց բարուրաշորերը, վորոնք ժամանակավորապես միայն պետք է մնան սենյակում ծածկած ամանի մեջ: Յերեխաների գնալուց հետո պետք է մանրակրկիտ կերպով մաքրել շենքը (անպատճառ թաց շորով կամ թաց ավելով, վոր փոշի չբարձրանա):

Մսուրի մեծ չերեխաների համար ալ կարգ ու կանոն կա. աշխնքն՝ չերեխաներին բերում են մսուր մայրերը վորոշ ժամերին, մսուրի սահմանած ժամերին— որինակ առավոտյան ժամը 5—7: Ղեկավարներն ընդունում են չերեխաներին և նրանց հակողության տակ չերեխաները լվանում են ձեռքերը, գեմքը, պարանոցն, ականջները, ողողում են բերանները և հագնում են մաքուր հագուստ: Պետք է ամեն կերպ թույլ տալ չերեխաներին կատարել ինքնուրույն կերպով ալն ամենը, ինչ վոր նրանց ուժին համապատասխան է: Մինչև տուարետի վերջացնելն արդեն պատրաստ պետք է լինի չերեխաների առաջին նախաճաշը: Յերեխաները նստում են սեղանի մոտ և չերեխաներից ընտրած որսապանները սպասարկում են մյուսներին. չերեխաները սկսում են ուտել նույն ժամանակ, չերը չուրաքանչյուրի առաջ դրած է իր նախաճաշը: Ղեկավարը հսկում է, վոր չերեխաները կարգ պահպանեն ուտելու ժամանակ, ազմուկ չանեն, չհրեն մեկը մյուսին, զանգաղ ուտեն և ալն...: Սեղանի մոտից հեռանում են չերեխաներն ալն ժամանակ, չերը բոլորն ել վերջացրել են ուտելը: Հերթապանները ղեկավարի հետ միասին կարգի չեն բերում սեղանատունը, լվանում են ամաններ, ժողովում են փշրանքները և ալն. իսկ մնացածներն ալդ ժամանակ դուրս են գալիս բաց օդը, չեթե անձրև է ժողովվում են ծածկոցի տակ կամ մնում են սենյակում: Մաքրելուց հետո որսապաններն ել միանում են մյուս չերեխաներին և սկսում են մանկական խաղերը, ավազով աշխատելը, կամ խաղալիքներ խաղալը, նկարում են, կավից զանազան ի-

բեր են շինում և այլն: Լավ լեզանակին պետք է տանել լերեխաներին հենց առավոտից զբոսնելու դաշտը, հանդը, անտառը, գետի մոտ (իհարկե շատ հեռու չպետք է լինի, վոր լերեխաները չհոգնեն լերկար ման գալուց):

Յեթե կան մեծ լերեխաներ, լերեքմն առավոտյան կարելի չե զրուցել նրանց հետ բնագիտությունից և այլն: Առհասարակ խաղերն ու հաճույքներն անաղին նշանակութուն ունեն ամառային մսուրի համար: Իրա վրա պետք է ուշադրութուն դարձնել: Ապա ուրեմն ամառային մսուրը պետք է ունենա գլուզական պայմաններին համապատասխան խաղալիքներ՝ բահ, փոցիս, սալլակներ, փայտի փոքր տակառներ և այլն: Առաջին նախաձառից 3—4 ժամ հետո պետք է պատրաստ լինի լերկորող նախաձառը: Յերեխաները լվանում են ձեռքերը և դարձյալ նախկին կարգով նստում են ուտելու. ուտելուց հետո ողողում են բերանները և պառկում են քնելու մահճակալների մեջ, իսկ լավ լեզանակին մինչև անգամ և խորի վրա: Իրա համար հարկավոր է մի բան փռել ստվերում: Յերեխաները $1\frac{1}{2}$ —2 ժամ քնում են. ալդ ժամանակ արհեստապես պետք է տաքացրած լինի ջուրը, վորի մեջ լուգանում են լերեխաները քնից հետո և անկողին ժողովելուց հետո (յեթե հնարավոր է և հարկավոր, կարելի չե լողանալ և սաղոնոփ): Յեթե լողանալն անկարելի չե, գոնե ջուր լցնեն վրաները: Տուն գալուց առաջ լերեխաները հագնում են իրենց հագուստը, ծալում են և ժողովում են յուրաքանչյուրն իր տոպրակի մեջ սպիտակեղենը, հագուստը և հետո գնում տուն: Շորերի տոպրակը պետք է լվանալ ամեն շաբաթ մի անգամից վոչ պակաս: Մսուր բաց անելիս տեղի բնարության խնդրում պետք է աշխատել բաց անել մի այնպիսի գլուզում, վորտեղ կանոնավոր բժշկական հսկողութուն կա:

Մսուր բնորոնելուց առաջ բժշկը քննում է լերեխա-

ներին. ծանր հիվանդ լերեխաներին, մանավանդ վարակիչներին, մսուր չեն ընդունում: Շաբաթական վոչ պակաս 2 անգամ բժիշկն այցելում է մսուրը լերեխաներին քննելու համար: Յեթե լերեխաներից վորեւե մեկը հիվանդանում է բժշկի քնության որը վարիչը առանձնացնում է լերեխային ուրիշ սենյակ մինչև բժշկի գալը: Յեթե լերեխան հիվանդանում է քննության հետևյալ որը, վարիչն ուղարկում է նրան բժշկի մոտ: Յեթե լերեխաներից վորեւե մեկը 3 որ շարունակ չի գալիս մսուր, այն ժամանակ նրան նորից ընդունում են մսուր միայն բժշկի գրության հիման բա և լերը նրա տունը պարզում է թե ինչու չեք գալիս դա մսուր:

Յեթե մսուրի շրջանում կա համաճարակ (կարմրուկ, քութեշ, կապույտ հաղ, տիֆ և այլն) մսուր չեն բացում:

Մսուրում բոլոր լերեխաներին ծաղիկ են պատվաստում:

ՄՍՈՒՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Մսուր ընդունում են բոլոր առողջ լերեխաներին մինչև 6 տարեկան հասակը բժշկի քննությունից հետո.

2. Բոլոր լերեխաներին պետք է պատվաստել ծաղիկ.

3. Յերեխաների ամենօրյա ընդունելության ժամանակը մսուրում և նրանց տուն տանելու ժամանակը կախում ունի դաշտային աշխատանքների տեղական պայմաններից.

4. Յերեխաներին պետք է բերեն մսուր կանոնավոր կերպով.

5. Տոն որերին մսուրը փակ պետք է լինի (պետք է կախել տոն որերի ցուցակը):

6. Յերեկոյան համար կամ տոն որերի համար կարելի չե տալ լերեխաներին անհամթերք, իսկ կաթնախառնուրդ կարելի չե տալ միայն այն լերեխաներին, վորոնք ծիծ չեն ուտում բոլորովին.

7. Մսուրում համաճարակ պատահելիս մսուրը փակում են բժշկի նշանակած ժամանակով:

8. Հիմնարկութիւնը պետք է պահել պատշաճ մաքրության և կարգի:

9. Մսուրում պետք է կազմակերպել մայրերի համար ընթերցանութիւն և զբոսայգիներ:

ԿԱՆՈՒՆՆԵՐ ՄԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Մայրերը պարտավոր են ամեն որ կանոնավոր կերպով բերել յերեխաներին մսուր և յերեկոյան, աշխատանքից հետո, տանել յերեխաներին տուն:

2. Յերեխային մսուր բերելիս մայրը պետք է հայտնի ինչ հիվանդութիւն կա տանը կամ ինչ վարակիչ հիվանդութիւն կա զրկիցի մոտ:

3. Ծիծ տվող մայրերը պետք է ըստ կարելուհն որվա մեջ 2—3 անգամ դան մսուր և կերակրեն իրենց յերեխաներին:

4. Յերեխային պետք է մսուր բերեն մաքուր և մաքուր սպիտակեղենում:

5. Մայրերը զալիս են առավոտյան կերակրում են և յեթե կաթը շատ է կթում են քրոջ հսկողութեան ներքո իրենց յերեխայի համար կաթը:

6. Մայրերն անշեղ կերպով պետք է յենթարկվեն բժշկի կարգադրութիւններին և յերեխայի տածման ու մեծի կանոններին:

7. Վոչ հարգելի պատճառներից կանոններ խախտող մայրերին զրկում են մսուր հաճախելու իրավունքից չերեք անգամ նախազգուշացնելուց հետո:

Անհրաժեշտ է մսուրում յերեխաների հասակի համեմատ սովորեցնել կուլտուր-առողջապահական սովորութիւններ, վորոշ ժամերին սիտեմատիկ կերպով լողացնել նրանց, լվանալ, ատամները մաքրել, ամանի վրա նստեց-

նել, փոխել կեղտոտած հագուստը և այլ նման միջոցներ: Անհրաժեշտ է սովորեցնել մեծ յերեխաներին մաքրել սենյակը կողեկտիվ կերպով, ստիպելով նրանց ժողովել խաղալիքները, տեղավորել խաղարանի սեղաններն ու աթոռիկները, ցանկալի չէ, վոր հանձնարարելին մեծերին ոգնութիւն հասցնել իրենցից փոքրերին իրենց ուժերի համեմատ խաղալիքներ տալ, հագուստ տալ և այլն: Բացի զբոսանքներից և եքսկուրսիաներից յերեխաները որվա մեծ մասը պիտի անց կացնեն տան մոտ ազատ խաղալով ավազի հետ, ջրի հետ, ձեռնասալլալի հետ, թիերի հետ և այլն: Դրա համար անհրաժեշտ է ունենալ ավազամաններ, անոթներ, թուկ, ջրցան և ամեն տեսակ անարժեք իրեր, որինակ՝ բանկաներ, արկղիկներ:

Անհրաժեշտ է լվանալ յերեխայի ձեռքերն ուտելուց առաջ և հետո: Սովորեցնել վոր յերեխան նստի սեղանի մոտ միշտ իր տեղում, վատ ուսողներին կամ այն յերեխաներին, վորոնք դեռ չգիտեն ինքնուրուշ կերպով ուտելը, նստեցնել ավելի ժիւր և ավելի լավ ուսողների մոտ, վորպեսզի ընդորինակեն: Կերակուրը թափելիս իսկուշն սրբել, վոր առիթ չլինի փնթիութեան:

Գլուղացի յերեխաների ամենամեծ պակասութիւնը նրանց լեզուն է: Բառերի փոքր պաշարը, խոսքերի վատ արտասանութիւնը: Ղեկավարները պետք է մեծ ուշադրութիւն դարձնեն յերեխաների լեզվի վրա: Անհրաժեշտ է խոսել յերեխաների հետ պարզ, վորոշ և հասկանալի լեզվով:



50

ՀՀ Ազգային գրադարան



NL0838528

158

11

23983

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

1/2 - 3